	<p>իսկ եթե նշված ծառայությունն այլևս հասանելի չէ կամ համապատասխան տոկոսադրույքն այլևս հասանելի չէ տվյալ էջի միջոցով՝ Հաշվարկային գործակալի կողմից սահմանված այլ ծառայության միջոցով համապատասխան տոկոսադրույքները ցուցադրող էջը:</p> <p>«Տոկոսադրույքի Սահմանման Ամսաթիվը» ցանկացած Տոկոսադրույքի Ժամանակահատվածի համար համարվում է նման Տոկոսադրույքի Ժամանակահատվածի առաջին օրվան երկու Աշխատանքային օրով նախորդող օրը:</p> <p>Այն դեպքում, երբ ՀՀ դրամով 6-ամսյա գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը որևէ պատճառով հասանելի չէ Տոկոսադրույքի սահմանման ամսաթվի դրությամբ, ապա տվյալ Տոկոսային ժամանակահատվածի համար հղման դրույք է հանդիսանում վերջին հրապարակված՝ ԿԲ Ռեպո գործառնության միջին կշռված տարեկան տոկոսադրույքը (կիրառելով օրերի հաշվարկման Act/360 պայմանականության բարդ տոկոսի բանաձևով), որը հայտնվում է Ֆինանսական գործառնությունների էջում (ինչպես սահմանված է ստորև) Տոկոսադրույքի սահմանման ամսաթվի՝ Երևանի ժամանակով ժամը 11:00-ի դրությամբ («Երկրորդային հղման դրույք»):</p> <p>«Ֆինանսական գործառնությունների էջ» նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կայքէջում https://www.cba.am/hy/financial-operations հասցեում ներկայացված էջը կամ</p>	<p>such Interest Period shall be the last published Weighted Average Rate of the last CBA Repo auction, which is the rate per annum (converted to an Act/360 day-count convention using the compound interest formula) appearing on the Financial Operations page (as defined below) at 11:00 a.m. (Yerevan time) on the Interest Determination Date (the "Secondary (Fallback) Rate").</p> <p>“Financial Operations page» means the display page designated as https://www.cba.am/en/financial-operations on the website of the Central Bank of Armenia, or such other successor or replacement page or service designated for the purpose of displaying the relevant rate, or if such service ceases to be available or the relevant rate ceases to be available on such page, the page that displays the relevant rates on another service, as determined by the Calculation Agent.</p> <p>If both the Reference Rate and Secondary (Fallback) Rate are unavailable, the Calculation Agent shall determine the Reference Rate in its sole discretion, acting in good faith and in a commercially reasonable manner.</p>
--	--	---

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

	<p>համապատասխան տոկոսադրույքի ցուցադրման նպատակով նշանակված այլ իրավահաջորդ էջ կամ ծառայություն, իսկ եթե նշված ծառայությունն այլևս հասանելի չէ կամ համապատասխան տոկոսադրույքն այլևս հասանելի չէ տվյալ էջի միջոցով Հաշվարկման գործակալի կողմից սահմանված այլ ծառայության միջոցով համապատասխան տոկոսադրույքները ցուցադրող էջը:</p> <p>Եթե Հղման դրույքը և Երկրորդային հղման դրույքները հասանելի չեն, Հղման տոկոսադրույքը որոշվում է Հաշվարկման գործակալի կողմից իր բացառիկ հայեցողությամբ, գործելով բարեխղճորեն և առևտրային առումով ողջամիտ ձևով:</p>	
<p>Պարտատոմսի Գնի Հաշվարկման Բանաձևը Bond Pricing Formula</p>	<p>Պարտատոմսի տեղաբաշխման գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է համաձայն հետևյալ բնաձևի.</p> $PF = \sum_{i=1}^N \frac{100 \times (I_{i-1} + RM) \times (T_i - T_{i-1}) \times \frac{1}{FDCC}}{\prod_{k=1}^i D_k} + \frac{100}{\prod_{k=1}^N D_k}$ $D_1 = 1 + \frac{1}{DCC} \times DSN \times y$ $D_k = 1 + \frac{1}{FDCC} \times (T_k - T_{k-1}) \times y, k \neq 1$ <p>որտեղ՝ N - Գործարքի կատարման օրվա դրությամբ վճարվելիք արժեկտրոնների քանակն է,</p>	<p>The placement price of a Bond per 100 units of nominal value will be determined in accordance with the following formula:</p> $PF = \sum_{i=1}^N \frac{100 \times (I_{i-1} + RM) \times (T_i - T_{i-1}) \times \frac{1}{FDCC}}{\prod_{k=1}^i D_k} + \frac{100}{\prod_{k=1}^N D_k}$ $D_1 = 1 + \frac{1}{DCC} \times DSN \times y$ $D_k = 1 + \frac{1}{FDCC} \times (T_k - T_{k-1}) \times y, k \neq 1$ <p>where: N – the number of coupons payable as at the transaction date; I_{i-1} – the reference rate of the Bond coupon. The unknown values of the reference rates required to calculate coupons as at the current date (the I(i) values) are taken to be equal to the</p>

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

	<p>I_{i-1} - Պարտատոմսի արժեկտրոնի հղման դրույքն է: Ընթացիկ օրվա դրությամբ արժեկտրոնների հաշվարկման համար անհրաժեշտ հղման դրույքների անհայտ մեծությունները (I_i-ները) վերցվում են հավասար հայտարարված հղման դրույքի պարամետրերին համապատասխանող ընթացիկ տվյալին,</p> <p>RM - Պարտատոմսի արժեկտրոնի հղման դրույքի մարժան է (սփրեդ), որը 0.00% է,</p> <p>y - Պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է Yield to Maturity - YTM), որով իրականացվում է ապագա դրամական հոսքերի զեղչումը (դիսկոնտավորումը),</p> <p>$T_i - T_{i-1} (T_k - T_{k-1})$ - Լողացող արժեկտրոնով պարտատոմսի i-րդ, k-րդ արժեկտրոնի փուլի օրերի քանակն է,</p> <p>FDCC - Պարտատոմսի տարվա օրերի քանակը՝ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>$D_k, (D_1)$ - Պարտատոմսի դիսկոնտավորման (զեղչման) գործակից,</p> <p>DSN - Գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակ՝ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>DCC - Փուլի օրերի քանակ՝ համապատասխան պայմանականության դեպքում:</p>	<p>current value corresponding to the declared reference-rate parameters;</p> <p>RM – the margin (spread) of the Bond coupon reference rate, which is 0.00%;</p> <p>y – the Yield to Maturity (YTM) of the Bond, at which future cash flows are discounted;</p> <p>$T_i - T_{i-1} (T_k - T_{k-1})$– the number of days in the i-th and k-th coupon period of the floating-rate Bond;</p> <p>FDCC – the number of days in the year of the Bond, under the applicable convention;</p> <p>$D_k, (D_1)$ – the discount factor of the Bond;</p> <p>DSN – the number of days between the maturity/redemption date of nominal value of the coupon following the transaction date and the transaction date, under the applicable convention;</p> <p>DCC – the number of days in the period, under the applicable convention.</p>
--	---	--

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

<p>Արժեկտրոնը Coupon</p>	<p>Արժեկտրոնը վճարվում է Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին ՀՀ դրամով: Արժեկտրոնը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.</p> <p>$(D \times CR \times N)/360$ Որտեղ՝ D՝ միավոր անվանական արժեքն է CR՝ արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքը N՝ համապատասխան Տոկոսադրույքի Ժամանակահատվածի փաստացի օրերի քանակ՝ հաշվարկված այդ ժամանակահատվածի (Թողարկման/Տեղաբաշխման Ամսաթիվ կամ վերջին Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվ) առաջին օրվանից (ներառյալ)՝ չներառելով հաջորդ Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվը կամ Մարման Ամսաթիվը, որոնք կս ենթակա են փոփոխության Հաջորդող Աշխատանքային Օրվա Կոնվենցիային համապատասխան: Եթե Պարտատոմսերի դիմաց վճարվող տոկոսային եկամուտը, հաշվարկված համաձայն սույն կարգ և պայմանների, չի կազմում 1 ՀՀԴ-ի ամբողջ բազմապատիկ, ապա այն կլորացվում է ներքև մինչև ամենամոտ 1 ՀՀԴ: Թողարկման ամբողջ ծավալի համար վճարման ենթակա Արժեկտրոնի ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $((D \times CR \times N) / 360) \times Q$ որտեղ՝ Q- թողարկված (շրջանառության մեջ գտնվող) պարտատոմսերի քանակն է:</p>	<p>The Coupon will be paid on each Coupon Payment Date in AMD.</p> <p>The Coupon payment is calculated per Denomination as follows:</p> <p>$(D \times CR \times N)/360$ Where D is the Denomination CR is the Coupon Rate (expressed as a percentage)</p> <p>N is the actual number of days in the respective Interest Period calculated from and including the first day of such period (being the Placement/Issuance Date or the last Coupon Payment Date as applicable) to but excluding the next Coupon Payment Date or the Maturity Date as applicable, subject to adjustment in accordance with the Following Business Day Convention.</p> <p>If an amount of interest payable in respect of any Bond, as calculated in accordance with these Terms and Conditions does not constitute an integral multiple of one AMD, such amount shall be rounded down to the nearest one AMD.</p> <p>The total Coupon amount payable in respect of the entire issue is calculated using the following formula:</p>
------------------------------	---	---

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

		$((D \times CR \times N) / 360) \times Q$ where: Q - the number of Bonds issued (outstanding).
Արժեկտրոն Ստացողները Coupon Recipients	Պարտատոմսերի Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին անմիջապես նախորդող Պահառուի համար Աշխատանքային օրվա վերջում Պահառուի կողմից վարվող՝ պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված անձինք:	Persons registered on the registry of the bondholders maintained with the Custodian at the end of the Business day of the Custodian immediately preceding the Coupon Payment Date.
Աշխատանքային Օրերը Business Days	Ցանկացած օր որին Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը բաց են ընդհանուր գործունեություն իրականացնելու համար:	Any day on which commercial banks and the Central Depository of Armenia are open for general business in the Republic of Armenia.
Հաջորդող Աշխատանքային Օրվա Կոնվենցիան Following Business Day Convention	Բոլոր վճարումներն իրականացվելու են նշված Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին և Մարման Ամսաթվին՝ ըստ Պահառուի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված անձանց ցուցակի՝ հիմք ընդունելով Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին և/կամ Մարման Ամսաթվին նախորդող Աշխատանքային Օրվա վերջում Պահառուի կողմից վարվող՝ պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված տվյալները: Եթե վճարման ամսաթիվը ոչ աշխատանքային օր է Հայաստանի Հանրապետությունում, ապա վճարումը պետք է իրականացվի համապատասխան Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին և Մարման Ամսաթվին հաջորդող առաջին աշխատանքային օրը:	All payments will be made on the stated Coupon Payment Date and Maturity Date as per the list of bondholders based on the data registered by the Custodian in the bondholders registry as at the end of the Business Day preceding the Coupon Payment Date and/or the Maturity Date unless such date is not a Business Day, in which case payment will be made on the first Business Day following the relevant Coupon Payment Date and/or the Maturity Date.
Օրերի Հաշվարկման Պայմանականությունը Day Count Convention	Փաստացի/360	Actual/360

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

<p>Արժեկտրոնի Կուտակումը Coupon Accrual</p>	<p>Արժեկտրոնը կհաշվարկվի սկսած և ներառյալ Թողարկման Ամսաթվից կամ վերջին Արժեկտրոնի Վճարման Ամսաթվից՝ չներառելով հաջորդ Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվը կամ Մարման Ամսաթիվը:</p>	<p>Interest will accrue from and including the Issuance Date or the last Coupon Payment Day to but excluding the next Coupon Payment Date or the Maturity Date (as applicable).</p>
<p>Պարտատոմսերի Մարումը Bond Redemption</p>	<p>Միանվագ մարում Մարման Ամսաթվին:</p>	<p>Bullet repayment on the Maturity Date.</p>
<p>Մարման Գումարը Redemption Price</p>	<p>Պարտատոմսերի Ընդհանուր Անվանական Ծավալի 100%-ի չափով:</p>	<p>100.00% of the Aggregate Principal Amount of Bonds</p>
<p>Մարման Գումարի Վերջնաշվարկը Settlement At Redemption</p>	<p>Թողարկողը պետք է փոխանցի Մարման Գումարը Վճարային գործակալի մոտ բացված բանկային հաշվին: Վճարային Գործակալը պետք է կատարի վճարումները Թողարկողի կողմից տրված անհետկանչելի վճարման հանձնարարականի հիման վրա:</p> <p>Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող Աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ ռեեստրի փակման պահի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:</p> <p>Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները փոխանցում է Վճարային գործակալի մոտ բացված բանկային հաշվին: Վճարային գործակալը Պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի</p>	<p>The Issuer will transfer the Aggregate Principal Amount of Bonds to its current account with the Paying Agent. The Paying Agent will make payments based on an irrevocable payment instruction of the Issuer.</p> <p>The register of owners/nominal holders of the Bonds is closed at 18:00 on the Business Day preceding the redemption date of the Bonds. The persons entitled to receive the redemption amount of the Bonds are those registered in the register of owners and/or nominal holders of the Bonds as at the moment of closing of the register.</p> <p>The Issuer shall transfer the redemption amounts of the Bonds to the bank account specified by the Payment Agent. The Payment Agent pays the redemption amounts of the Bonds by transfer to the bank accounts indicated in the register of owners/nominal holders of the Bonds. In the event of the absence or incorrectness of the bank account numbers indicated in the register of owners and/or nominal holders of the Bonds, the Payment Agent will transfer/freeze the amount to an account opened for that purpose, and will thereafter use all reasonable efforts to locate the bondholders and transfer the amount.</p>

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

	<p>սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվների փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Վճարային գործակալը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:</p> <p>Վերջնահաշվարկը իրականացվում է նույն օրը՝ ոչ ուշ, քան Պահառուի Աշխատանքային օրվա ավարտը:</p>	<p>Settlement will be complete on the same day, no later than at the end of the Business Day of the Custodian.</p>
<p>Մտացված Հասույթի Օգտագործումը Use of Proceeds</p>	<p>Զուտ հասույթը պետք է համալրի Թողարկողի սովորական կապիտալ միջոցները և կարող է ուղղվել նրա բնականոն գործունեությանը:</p>	<p>The net proceeds will be included in the ordinary capital resources of the Issuer and used in its ordinary operations.</p>
<p>Տեղաբաշխող Underwriter</p>	<p>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</p>	<p>Converse Bank CJSC</p>
<p>Տեղաբաշխումը Underwriting</p>	<p>Պարտատոմսերը կտեղաբաշխվեն երաշխավորված տեղաբաշխման սկզբունքով</p>	<p>Bonds will be allocated through guaranteed (firm-commitment) underwriting.</p>
<p>Օպցիոնների Առկայությունը Embedded options</p>	<p>Առկա չեն</p>	<p>None</p>
<p>Տեղաբաշխման Սահմանափակումները Restrictions At Placement</p>	<p>Պարտատոմսերը չեն կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկվել կամ վաճառվել ՀՀ-ից բացի որևէ այլ իրավագործությունում, և կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկվել կամ վաճառվել միայն ՀՀ օրենսդրության ներքո:</p>	<p>The Bonds shall not be offered or sold directly or indirectly in any jurisdiction other than Armenia and only in accordance with the laws of Armenia.</p>

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

<p>Տեղաբաշխման վերջնահաշվարկը Settlement At Placement</p>	<p>Համաձայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ արժեթղթերի տեղաբաշխման կանոնների:</p>	<p>According to AMX Securities Placement Rules.</p>
<p>Կիրառվող Իրավունքը Governing Law</p>	<p>Պարտատոմսերը և դրան առնչվող բոլոր պայմանագրերը ղեկավարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:</p>	<p>The Bonds will be governed by and construed in accordance with Armenian Law.</p>
<p>Վաճառքի Սահմանափակումները Selling Restrictions</p>	<p>Պարտատոմսերի վաճառքը և առաքումը, ինչպես նաև առաջարկի փաստաթղթերի առաքումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Այս փաստաթուղթը չի ներառում վաճառելու առաջարկ կամ հորդոր առաջարկելու գնել տվյալ պարտատոմսերը ցանկացած օրենսդրության համաձայն, որտեղ տվյալ առաջարկը, հորդորը կամ վաճառքը կարող են լինել հակաօրինական:</p>	<p>The sale and delivery of the Bonds and the distribution of offering material relating to the Bonds may be subject to certain restrictions. This document does not constitute an offer to sell or the solicitation of an offer to buy these Bonds in any jurisdiction in which such offer, solicitation or sale would be unlawful.</p>
<p>Շուկա ստեղծողներ Market Makers</p>	<p>Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:</p> <p>Մինչև տեղաբաշխված Պարտատոմսերը կարգավորվող շուկայի «Abond» ցուցակում ցուցակելու նպատակով ՀՖԲ-ին դիմում ներկայացնելը, Թողարկողը երկու (կամ ավելի) շուկա ստեղծողների հետ կնքելու է շուկա ստեղծողի պայմանագիր:</p> <p>Ցուցակումից հետո ներդրողները կարող են Թողարկողի կողմից թողարկված Պարտատոմսերի շուկա ստեղծողների վերաբերյալ տեղեկատվությանը ծանոթանալ ՀՖԲ-ի կայքում՝ www.amx.am :</p>	<p>The Issuer has not yet entered into an agreement with specialised persons regarding the provision of market-maker (market-making) services in the secondary market.</p> <p>Prior to submitting an application to AMX to list the placed Bonds on the regulated market’s “Abond” list, the Issuer shall enter into a market making agreement with two (or more) market makers.</p> <p>Once the listing is approved, investors may view information regarding the market makers of the Bonds issued by the Issuer on the website of the AMX at www.amx.am.</p>



European Bank
for Reconstruction and Development

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ NOTICE TO INVESTORS

3.1. Պարտատոմսերից Բխող Իրավունքները

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վարվող Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրում գրանցված պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնների և 3.1. կետով սահմանված պարտատոմսի մարման գումարը՝ համաձայն սույն փաստաթղթով սահմանված կարգի:

3.2. Էական Տեղեկությունների Փոփոխությունները Պարտատոմսերի Պայմաններում

Պարտատոմսերին վերաբերող էական տեղեկությունների փոփոխության դեպքում Թողարկողը պարտավորվում է փոփոխության առաջացմանը հաջորդող 10 (տասը) Աշխատանքային օրվա ընթացքում Բորսա ներկայացնել տեղեկատվություն այդ փոփոխությունների վերաբերյալ՝ Բորսայի կայքում հրապարակելու համար:

3.3. Սեփականության Իրավունքի Փոխանցում

Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը կփոխանցվի պարտատոմսի սեփականատիրոջ անունով այն Պահառուի (իսկ այն դեպքում, երբ պարտատոմսի սեփականատիրոջ Պարտատոմսերը հաշվառվում են ենթապահառուի մոտ, ապա այդ ենթապահառուի) մոտ գրանցելու պահից: Բանկը և Վճարային Գործակալը կարող են Պահառուի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի հիման վրա Պահառուի կողմից տրված ցուցակում նշված անձանց համարել պարտատոմսով հավաստվող իրավունքների

3.2. Rights Arising from the Bonds

The owners of the Bonds registered in the register of owners of the Bonds maintained by the Central Depository of Armenia are entitled to receive the coupons envisaged by the Bond and the redemption amount of the Bond, in accordance with the terms stipulated in 3.1.

3.3. Changes to Material Information in the Terms of the Bonds

In the event of any change to material information relating to the Bonds, the Issuer shall submit information on such changes to the “Armenia Stock Exchange” OJSC within 10 (ten) Business Days following the occurrence of the change, for publication on the website of “Armenia Stock Exchange” OJSC.

3.4. Transfer of title

Title to the Bonds shall pass upon registration of the title to the bond by the Custodian (or, in case the bondholder’s securities account is maintained by a subcustodian, then by such subcustodian) in the bondholder’s name. The Paying Agent may deem and treat the bondholders specified in the bondholder’s list issued by the Custodian based on the bondholders’ registry maintained by the Custodian as the absolute holder of rights represented by such bonds for the purpose of making payments and for all other purposes.

միակ և ամբողջական կրողներ՝ վճարումներ կատարելու և բոլոր այլ նպատակներով:

3.4. Խախտման Դեպք

Եթե ՎՋԵԲ-ի կողմից թույլ է տրվում խախտում.

- (ա) Պարտատոմսերի մայր գումարը կամ տոկոսագումարները սահմանված ժամկետից 90 օրվա ընթացքում չվճարելով կամ,
- (բ) Պարտատոմսերով պայմանավորված ցանկացած այլ գործարքի կամ պայմանավորվածության չիրականացման ժամանակ, եթե խախտման ժամանակահատվածը տևում է Պահառուի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված Պարտատոմսի սեփականատիրոջ կողմից Բանկի՝ Վճարային Գործակալի նշած գրասենյակ գրավոր ծանուցումից հետո 90 օր կամ,
- (գ) Բանկի կողմից թողարկված կամ երաշխավորված պարտատոմսի, մուրհակի կամ նմանատիպ այլ պարտավորության դիմաց մայր գումարը կամ տոկոսները 90 օր ժամանակահատվածի ընթացքում չվճարելով,

Ապա՝ վերոնշյալին հաջորդող ցանկացած ժամանակ և նման խախտման ընթացքում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված ցանկացած անձ կարող է Բանկ ներկայացնել Լոնդոնում գտնվող գլխավոր գրասենյակ գրավոր ծանուցում կամ ապահովել նշված ծանուցման ներկայացումն առ այն, որ այդ անձը որոշում է հայտարարել, որ իրեն պատկանող բոլոր պարտատոմսերի ընդհանուր գումարը (որի հերթական համարները և անվանական արժեքները սահմանվում են նման ծանուցման մեջ) ենթակա են պարտադիր վճարման, և այդ Պարտատոմսերի ընդհանուր գումարը կուտակված տոկոսագումարների հետ միասին պետք է դառնան պարտադիր վճարման ենթակա

3.5. Events of Default

If EBRD shall default:

- (a) for a period of 90 days in the payment of the principal of, or interest on, the Bonds; or
- (b) in the performance of any other covenant or agreement contained in the Bonds and any such default shall continue for a period of 90 days after written notice thereof shall have been given to the Bank at the specified office of the Paying Agent by any Bondholder, registered with the registry maintained by the Custodian; or
- (c) in the payment of the principal of, or interest on, any bonds, notes or similar obligations which have been issued, assumed or guaranteed by the Bank and such default shall continue for a period of 90 days;

then at any time thereafter and during the continuance of such default any bondholder may deliver or cause to be delivered to the Issuer at its principal office in London, written notice that such bondholder registered with the registry maintained by the Custodian elects to declare the principal of all Bonds held by it (the serial numbers and denominations of which shall be set forth in such notice) to be due and payable, and 30 days after the date on which such notice shall be so delivered to the Bank the principal of such Bonds shall become due and payable, together with all accrued interest thereon unless prior to that time such default shall have been cured.

If the Issuer fails to pay when due any amount payable under the Bonds, the overdue amount shall bear daily interest at a rate equal to the “Reference Rate + 0.00%” per annum”

Default interest shall be payable in AMD and shall:

Բանկին նման ծանուցումը առաքելու օրվանից 30 օր հետո, եթե մինչ այդ խախտումը չի վերացվում:

Եթե Բանկը չի վճարում Պարտատոմսերից բխող վճարման ենթակա ցանկացած գումար, չվճարված գումարի նկատմամբ հաշվարկվում է օրական տոկոսագումար “Հղման տոկոսադրույք+0.00%” տարեկան տոկոսադրույքով:

Խախտման տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով և

- (i) վճարման ենթակա օրվանից հաշվարկվում են յուրաքանչյուր օր մինչ փաստացի վճարման օրը,
- (ii) հաշվվում են փաստացի բաց թողնված օրերի և 360-օրյա տարվա հիման վրա,
- (iii) ենթակա են վճարման ՎՁԵԲ-ի կողմից նախկինում խախտված պարտականության հետ միասին:

Թողարկողի կողմից Պարտատոմսերից բխող իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն դատական հայց ներկայացնելու ընդդեմ ՎՁԵԲ-ի և պահանջելու Պարտատոմսի մարում, Պարտատոմսի համար նախատեսված եկամուտների և Պարտատոմսի ժամկետանց մարման հետևանքով կուտակված տոկոսագումարների վճարում սույն բաժնին և Պարտատոմսերի պայմաններին համապատասխան: Պարտատոմսերից բխող պարտականությունները ՎՁԵԲ-ի կողմից չկատարելու դեպքում պահանջների ներկայացման ժամկետը սահմանվում է 3 տարի այն օրվանից, երբ նախատեսվում էր ՎՁԵԲ-ի Պարտատոմսերից բխող համապատասխան պարտավորությունների կատարումը:

Համաձայն 1990թ. մայիսի 29-ին կնքված՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Հիմնադրման համաձայնագրի՝ ՎՁԵԲ-ն իր պաշտոնական գործունեության

- (i) accrue from day to day from the due date to the date of actual payment;
- (ii) be calculated on the basis of the actual number of days elapsed and a 360-day year;
- (iii) be due and payable by the EBRD simultaneously with the performance of the earlier defaulted obligation.

In the event of the failure to perform or improper performance by the Issuer of its obligations under the Bonds, bondholders registered with the registry maintained by the Custodian may file a law suit with the court against the EBRD, and demand redemption of the Bond and payment of the income envisaged thereby and interest accrued due to the late redemption of the Bond in accordance with this Section and the Terms and Conditions. The limitation period with respect to the demands arising from the failure of the EBRD to perform its obligations under the Bonds is three years from the date on which the EBRD was supposed to perform the relevant obligations under the Bonds.

In accordance with the Agreement Establishing the European Bank for Reconstruction and Development of 29 May 1990 EBRD, within the scope of its official activities, enjoys immunity from jurisdiction, subject to waiver of immunity. Actions may be brought against the Issuer only in a court of competent jurisdiction in the territory of a country in which it has an office, has appointed an agent for the purpose of accepting service or notice of process, or has issued or guaranteed securities. No action against the Issuer may be brought by its members or persons acting for or deriving claims from its members.

The property and assets of the EBRD are immune from all forms of seizure, attachment or execution before the delivery of final judgment against it. Such property and assets are also immune from search, requisition, confiscation, expropriation and any other form of taking or foreclosure by

շրջանակներում օժտված է դատական անձեռնմխելիությամբ, որից Բանկը կարող է հրաժարվել: Թողարկողի դեմ հայցեր կարող են հարուցվել միայն այն երկրի տարածքում գտնվող իրավասու դատարաններում, որտեղ Բանկն ունի հիմնարկ, նշանակել է գործակալ դատական ծանուցագրի կամ դատավարության մասին ծանուցում ընդունելու նպատակով, կամ թողարկել կամ երաշխավորել է արժեթղթեր: Թողարկողի դեմ չեն կարող հարուցվել իր անդամների կամ նրանց համար գործող անձանց դատական հայցեր կամ անդամներից բխող պահանջներ:

ՎԶԵԲ-ի գույքն ու ակտիվները օժտված են անձեռնմխելիությամբ բռնագանձման, կալանքի կամ ոչնչացման բոլոր ձևերից՝ մինչև Բանկի դեմ վերջնական դատական որոշում կայացնելը: Նման գույքն ու ակտիվները նույնպես անձեռնմխելի են հետախուզումից, առգրավումից, բռնագանձումից, սեփականության նկատմամբ իրավունքի զրկումից և գործադիր կամ օրենսդիր նմանատիպ այլ գործունեության արդյունքում վերցնելու կամ բռնագանձման ցանկացած այլ ձևերից: Բանկի արխիվներն անձեռնմխելի են: Սույնով նախատեսված որևէ դրույթ չի կարող հանդիսանալ սույն կետում նախատեսված անձեռնմխելիությունից կամ արտոնություններից հրաժարում:

Թողարկողի Կառավարիչները, Կառավարիչների տեղակալները, Տնօրենները, Տնօրենների տեղակալները, պաշտոնատար անձինք և ծառայողները, ինչպես նաև Թողարկողի հանձնարարությունները կատարող փորձագետներն օժտված են անձեռնմխելիությամբ դատական գործողություններից իրենց ծառայողական պարտականությունների շրջանակում իրականացված գործողությունների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Թողարկողը հրաժարվում է նման անձեռնմխելիությունից: Սույնով նախատեսված որևէ դրույթ չի կարող հանդիսանալ սույն կետով սահմանված անձեռնմխելիությունից կամ արտոնություններից հրաժարում:

executive or legislative action. The archives of the EBRD are inviolable. Nothing herein contained shall constitute a waiver in respect of any immunities or privileges specified in this paragraph.

The Governors, Alternate Governors, Directors, Alternate Directors, officers and employees of the Issuer, *including* experts performing missions for it, are immune from legal proceedings for acts performed by them in their official capacities, except when the Issuer waives such immunity. Nothing herein contained shall constitute a waiver in respect of any immunities or privileges specified in this section.

ԾԱՆՈԹՑՈՒՄ ՆԵՐՄՈՂՆԵՐԻՆ
NOTICE TO INVESTORS

Անուն, ազգանուն/ Name: Ազիզ Ջուրայեվ/ Aziz Jurayev

Պաշտոն/ Position: Փոխտնօրեն, Ֆինանսավորման ավագ պաշտոնյա/Associate Director,
Senior Funding Officer

Ստորագրություն/Signature:  L.S. / Կ.Տ.

Ամսաթիվ/Date: Հունիսի 25, 2026թ./25 June 2026